# FACTOR TV-ի ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ

FACTOR TV 2026

RA, Yerevan, 12 Saryan str.
E-mail: info@factor.am
Web: www.factor.am
© All Rights Reserved

## 1. ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

FACTOR TV-ն անկախ լրատվամիջոց է, որը ծառայում է հանրային շահին՝ ապահովելով ճշգրիտ, ստուգված, հավասարակշռված և պատասխանատու լրագրություն:

Մենք կարևորում ենք հաշվետու և թափանցիկ կառավարումը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը, քաղաքացիական հասարակության ուժեղացումը, սոցիալական արդարությունը, իրավահավասարությունը և որակյալ հանրային քննարկումը:
Մեր նպատակն է հանրությանը տրամադրել վստահելի տեղեկատվություն, նպաստել տեղեկացված որոշումների կայացմանը և իշխանության, հանրային պաշտոնյաների ու ազդեցիկ կառույցների հաշվետվողականությանը:

## 2. ՃՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Ճշգրտությունը FACTOR TV-ի աշխատանքի հիմնարար սկզբունքն է:
Մենք ձգտում ենք հրապարակել միայն ստուգված և հավաստի տեղեկատվություն, տարանջատել փաստերը կարծիքներից: Բացառիկ դեպքերում, երբ հանրային շահից ելնելով  ստիպված ենք հրապարակել  տեղեկատվություն, որի ամբողջական ստուգումն այդ պահին հնարավոր չէ, այդ հանգամանքը հստակ նշվում է նյութում:

Առաջնահերթությունը տրվում է սկզբնաղբյուրներին, պաշտոնական փաստաթղթերին, բաց տվյալներին, ականատեսների վկայություններին և ստուգելի ապացույցներին:

Վերնագրերը, լուսանկարները, տեսանյութերը, ենթագրերը և սոցիալական ցանցերում նյութերի ներկայացումը չպետք է մոլորեցնեն լսարանին կամ ստեղծեն այնպիսի տպավորություն, որը չի բխում նյութի բովանդակությունից:

Եթե որևէ անձի, կազմակերպության կամ հաստատության մասին հրապարակվում է տեղեկություն, որը կարող է բացասական հանրային ընկալում ձևավորել կամ վնասել նրա հեղինակությանը, FACTOR TV-ն մինչև հրապարակումը գործադրում է ողջամիտ մասնագիտական ջանքեր՝ ստանալու տվյալ կողմի դիրքորոշումը: Եթե մեկնաբանություն ստանալը մինչև հրապարակումը հնարավոր չէ, այդ մասին նշվում է նյութում, իսկ ստացված պատասխանը հրապարակվում է հնարավորինս սեղմ ժամկետում:

FACTOR TV-ն ապահովում է պատասխանի իրավունքը, եթե ներկայացվող պատասխանը չի պարունակում ակնհայտ կեղծ տեղեկություններ, փաստերի գիտակցված խեղաթյուրում, ապատեղեկատվություն, ատելության խոսք, անձնական վիրավորանք կամ օրենքով արգելված բովանդակություն: Սխալների հայտնաբերման դեպքում դրանք ուղղվում են արագ, բաց և թափանցիկկերպով:

## 3. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

FACTOR TV-ի խմբագրական որոշումները կայացվում են բացառապես մասնագիտական չափանիշներով:

Որևէ քաղաքական, պետական, ֆինանսական, անձնական, գովազդային կամ այլ շահ չի կարող ազդել թեմաների ընտրության, նյութերի բովանդակության, հրապարակման ժամկետների, վերնագրերի կամ խմբագրական մոտեցումների վրա:

FACTOR TV-ի լրագրողները, խմբագիրները և աշխատակիցները պարտավոր են պաշտպանել խմբագրության անկախությունը և խուսափել այնպիսի գործողություններից, որոնք կարող են կասկածի տակ դնել իրենց մասնագիտական անաչառությունը կամ լրատվամիջոցի վստահելիությունը:

## 4. ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

FACTOR TV-ն ձգտում է հնարավորինս հրապարակել տեղեկատվության աղբյուրները կամ հղում կատարել դրանց, եթե դա չի վտանգում աղբյուրի անվտանգությունը, իրավունքը, մասնագիտական դիրքը կամ հետաքննության ընթացքը:

Անանուն աղբյուրներն օգտագործվում են միայն բացառիկ դեպքերում, երբ տեղեկատվությունն ունի հանրային նշանակություն, իսկ աղբյուրի ինքնության բացահայտումը կարող է նրան վնասել կամ վտանգել: Անանուն աղբյուրից ստացված տեղեկության ստուգման նպատակով գործադրվում են առավելագույն ջանքեր, տեղեկատվությունը հրապարակվում է անկախ աղբյուրներով, փաստաթղթերով կամ այլ ստուգելի ապացույցներով հաստատվելու դեպքում:

FACTOR TV-ն պաշտպանում է գաղտնի աղբյուրների ինքնությունը՝ բացառությամբ օրենքով նախատեսված և իրավաչափորեն հիմնավորված դեպքերի:

## 5. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

FACTOR TV-ի աշխատակիցները պարտավոր են խուսափել իրավիճակներից, որոնք կարող են իրենց մասնագիտական անկախության վրա ազդել կամ  ձևավորել ազդելու ընկալում:

Լրագրողները և խմբագիրները չեն կարող լուսաբանել այն թեմաները, որոնց հետ կապված ունեն անձնական, ընտանեկան, ֆինանսական, քաղաքական կամ այլ շահագրգռվածություն:

Նման հանգամանքների առկայության դեպքում աշխատակիցը պարտավոր է այդ մասին տեղեկացնել անմիջական ղեկավարին, որը կարող է որոշում կայացնել նրան հեռացնել տվյալ նյութի պատրաստման կամ խմբագրման գործընթացից:

## 6. ՆՎԵՐՆԵՐ, ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

FACTOR TV-ի աշխատակիցները չեն ընդունում նվերներ, ծառայություններ, գումար, արտոնություններ կամ այլ առավելություններ, որոնք կարող են իրենց մասնագիտական գործունեության վրա ազդել կամ ազդելու ընկալում ստեղծել:

Արտաքին կազմակերպությունների կողմից առաջարկվող ուղևորությունների, հյուրընկալության, միջոցառումների մասնակցության կամ այլ աջակցության ընդունումը չի կարող ազդել լուսաբանման բովանդակության կամ տոնի վրա:

## 7. ԳՈՎԱԶԴԱՅԻՆ, ՀՈՎԱՆԱՎՈՐՎՈՂ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

FACTOR TV-ն հստակ տարանջատում է լրագրողական, գովազդային, հովանավորվող և գործընկերային բովանդակությունը:

Ցանկացած գովազդային, հովանավորվող կամ գործընկերային նյութ պատշաճ և տեսանելի կերպով մակնշվում է, որպեսզի լսարանը հստակ հասկանա՝ ինչ բնույթի բովանդակություն է սպառում:

Գովազդատուները, հովանավորները և գործընկեր կազմակերպությունները չեն կարող ազդել FACTOR TV-ի խմբագրական որոշումների, լրագրողական մոտեցումների, հարցերի ձևակերպման, վերնագրերի կամ հրապարակման ժամկետների վրա:

FACTOR TV-ն չի հրապարակում քողարկված գովազդ և գովազդային բովանդակությունը չի ներկայացնում որպես անկախ լրագրություն:

## 8. ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔ

FACTOR TV-ն հարգում է մարդու մասնավոր կյանքի իրավունքը:

Մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են միայն այն դեպքում, երբ առկա է հստակ և գերակա հանրային շահ:

Հանրային հետաքրքրասիրությունը ինքնին հանրային շահ չէ: Հանրային շահ կարող է լինել, օրինակ, իշխանության չարաշահման, կոռուպցիայի, մարդու իրավունքների խախտման, հանրային ռեսուրսների վատնման, անվտանգության սպառնալիքի կամ հանրության համար էական նշանակություն ունեցող այլ հարցի բացահայտումը:

## 9. ՉՎՆԱՍԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔ

FACTOR TV-ն առաջնորդվում է «չվնասելու» սկզբունքով՝ գիտակցելով, որ լրագրողական գործունեությունը կարող է ազդեցություն ունենալ մարդկանց կյանքի, անվտանգության, արժանապատվության և բարեկեցության վրա::

Հրապարակման հանրային շահը գնահատելիս մենք հաշվի ենք առնում դրա հնարավոր հետևանքները՝ հատկապես երեխաների, բռնության զոհերի, սգավոր ընտանիքների, առողջական կամ հոգեբանական դժվարություններ ունեցող անձանց, փախստականների, տեղահանվածների և այլ խոցելի խմբերի նկատմամբ

Մենք խուսափում ենք անհարկի սենսացիոնիզմից, մարդու տառապանքի շահարկումից և այնպիսի մանրամասների հրապարակումից, որոնք կարող են վնաս հասցնել  անձի անվտանգությանը, արժանապատվությանը կամ մասնավոր կյանքին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց հրապարակումն անհրաժեշտ է գերակա հանրային շահի տեսանկյունից:

## 10. ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

FACTOR TV-ն հարգում է յուրաքանչյուր մարդու արժանապատվությունն ու հիմնարար իրավունքները:

Մեր հրապարակումներում տեղ չունեն ատելության խոսքը, խտրականությունը, նվաստացնող վերաբերմունքը կամ բռնության արդարացումը՝ ազգային պատկանելության, ռասայի, սեռի, կրոնի, քաղաքական հայացքների, հաշմանդամության, սոցիալական վիճակի, սեռական կողմնորոշման կամ այլ հատկանիշների հիմքով:

Խոցելի խմբերին վերաբերող թեմաները լուսաբանելիս FACTOR TV-ն առաջնորդվում է զգուշավորության, հարգանքի և անհարկի վնաս չպատճառելու սկզբունքներով:

## 11. ՎԻՁՈՒԱԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

FACTOR TV-ն չի փոփոխում լուսանկարները, տեսանյութերը կամ ձայնագրությունները այնպես, որ խեղաթյուրի իրականությունը կամ մոլորեցնի լսարանին:

Արհեստական բանականությամբ ստեղծված կամ էականորեն փոփոխված բովանդակությունը հստակ մակնշվում է:

Արհեստական բանականությունը կարող է օգտագործվել միայն որպես օժանդակ գործիք և չի կարող փոխարինել լրագրողի մասնագիտական դատողությանը, փաստերի ստուգմանը, խմբագրական վերահսկողությանը կամ պատասխանատվությանը:

FACTOR TV-ն չի օգտագործում արհեստական բանականություն մարդկանց խոսքը, պատկերը, ձայնը կամ իրադարձությունները ստեղծելու կամ փոփոխելու նպատակով այնպես, որ լսարանը կարող է դա շփոթել իրականության հետ:

## 12. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՎԱՐՔԱԳԾԻ

FACTOR TV-ի աշխատակիցները սոցիալական ցանցերում նույնպես առաջնորդվում են մասնագիտական էթիկայի սկզբունքներով:

Նրանք խուսափում են հրապարակումներից, մեկնաբանություններից, քաղաքական քարոզչությունից կամ հանրային վարքագծից, որոնք կարող են կասկածի տակ դնել իրենց անկախությունը, անաչառությունը կամ FACTOR TV-ի հեղինակությունը:

Աշխատակիցների անձնական կարծիքը չպետք է ներկայացվի որպես FACTOR TV-ի խմբագրական դիրքորոշում:

## 13. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

FACTOR TV-ն բաց է հանրության դիտողությունների, քննադատության և հարցերի համար:

Մենք ընդունում և ուղղում ենք մեր սխալները, անհրաժեշտության դեպքում բացատրում ենք խմբագրական որոշումների հիմքերը և ձգտում ենք պահպանել լսարանի վստահությունը՝ գործելով բաց, ազնիվ և հաշվետու կերպով:

Հնարավորության դեպքում մենք բացատրում ենք, թե ինչպես է ձեռք բերվել հանրային նշանակություն ունեցող տեղեկատվությունը և ինչ սահմանափակումներ են եղել դրա ստուգման ընթացքում: Այս սկզբունքը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ նման բացահայտումը կարող է վտանգել աղբյուրները, անձանց անվտանգությունը, հետաքննության ընթացքը կամ լրագրողական աշխատանքի օրինական պաշտպանությունը:

## 14. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

FACTOR TV-ի բոլոր աշխատակիցներն ու թղթակիցներն իրենց գործունեության ընթացքում առաջնորդվում են սույն կանոնագրի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրով:

Սույն կանոնագիրը սահմանում է FACTOR TV-ի նվազագույն մասնագիտական և էթիկական չափանիշները: Այն չի կարող կանխատեսել բոլոր իրավիճակները, ուստի չկարգավորված դեպքերում խմբագրությունը առաջնորդվում է հանրային շահի, մարդու իրավունքների պաշտպանության, մասնագիտական բարեխղճության, ճշգրտության, արդարության և անկախ լրագրության լավագույն սկզբունքներով: